



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻՂՐՈՑԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 31 » 05 2021թ.

№ 08/ԼԱ/ - 371

2021թ. մայիսի 24-30-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Մայիսի 24-26-ը շրջանների զգալի մասում, 27-29-ը առանձին շրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ: Մայիսի 30-ին դիտվել է առանց տեղումների եղանակ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Գյումրիում՝ 51.8մմ, Աշոցքում՝ 46մմ, Ստեփանավանում՝ 44,6մմ, Վանաձորում՝ 38,6մմ, Պուշկինի լճ.-ում՝ 37մմ, Ծաղկահովիտում՝ 29մմ, Ամասիայում՝ 28մմ, Սևանում և Ֆանտանում՝ 27մմ, Արագածում՝ 24,9մմ, Ապարանում՝ 24.7մմ, Դիլիջանում՝ 23,5մմ, Ճամբարակում, Եղվարդում և Ապարան լճ.-ում՝ 20մմ, Իջևանում և Վարդենյաց լճ.-ում՝ 19մմ, Արտաշատում՝ 18մմ, մնացած շրջաններում մինչև 15մմ քանակությամբ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը մայիսի 24-ին նորմայից բարձր է եղել 3-5 (Արարատյան դաշտում՝ 2-3), 25-ին՝ 1-3 (Սյունիքում՝ նորմայի սահմաններում՝ դրական և բացասական շեղումներով), 26-27-ին՝ 1-2 աստիճան դրական և բացասական շեղումներով, 28-30-ին՝ 3-6 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է մայիսի 29-30-ին՝ Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտում՝ +31...+34°C (Մեղրիում՝ +38°C), Տավուշում, Արագածոտնի, Կոտայքի, Վայոց Ձորի և Սյունիքի նախալեռներում՝ +27...+32°C (Արենիում՝ +34°C), Լոռիում, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +22...+27 (Վանաձորում՝ +28°C, Սեմյոնովկայում՝ +21°C) աստիճան տարբայուն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է մայիսի 27-ին՝ Շիրակում՝ 0...+4°C, Լոռիում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +2...+7°C (Ծաղկահովիտում՝ 0°C, Տաշիրում և Սեմյոնովկայում՝ +1°C), Տավուշում, Արագածոտնի, Կոտայքի, Վայոց Ձորի և Սյունիքի նախալեռներում՝ +6...+11°C (Դիլիջանում՝ +4°C, Սիսիանում՝ +5°C), Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ +10...+15°C աստիճան տարբայուն:

Մայիսի 24-ին Գյումրիում և Վանաձորում դիտվել է կարկուտ՝ 11մմ և 6մմ, 25-ին Ապարանում՝ 8մմ, 26-ին Սևանում՝ 8մմ, 28-ին Վանաձորում՝ 0,4մմ տրամագծով:

Շաբաթվա ընթացքում առանձին շրջաններում դիտվել է քամի՝ 8-16մ/վրկ, պողոթյունները՝ մինչև 16-22 մ/վրկ արագությամբ:

Մայիսի 24-ին Աշոցքում, Գյումրիում և Արարատում դիտվել է քամու ուժգնացում՝ պողոթյունները մինչև 22-24մ/վ արագությամբ:

Շաբաթվա ընթացքում շարունակվել են գյուղատնտեսական աշխատանքները, եղանակային պայմանները նպաստավոր են եղել այն իրականացնելու համար:

Մայիսին 24-ին Գյումրիում, 25-ին՝ Ապարանում, 26-ին՝ Սևանում, 28-ին՝ Վանաձորում դիտվել է կարկուտ՝ 8-11մմ:

Հովտային շրջաններում կատարվել է պտղատուների, հացահատիկային, բանջարանոցային մշակաբույսերի և խաղողի այգիների հերթական սնուցող ոռոգում, ջերմասեր մշակաբույսերի մոտ առաջացել է երրորդ տերևը, Ուրցածորում՝ ծաղկաբույլերը:

Նախալեռնային շրջաններում սկսվել է պտղատուների պտղի ձևավորումը, բանջարանոցայինները ծլել են:

Լեռնային շրջաններում հացահատիկային մշակաբույսերը գտնվել են երրորդ տերևի, հանգուցային արմատների և թփակալման փուլերում, բույսի բարձրությունը կազմել է 20-26սմ: Շարունակվել է հնդավորների ծաղկումը, տեղ-տեղ ծաղկումն ավարտվել է:

Մայիսի 24-25-ը, 29-30-ը հանրապետության գետերում ջրի ելքերի բնական էական փոփոխություններ չեն դիտվել: Մայիսի 25-26-ը գետերում դիտվել է ջրի ելքերի փոփոխական ռեժիմ, իսկ մայիսի 28-ին՝ դիտվել է ջրի ելքերի նվազում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 3 սմ-ով (23.05-30.05.2021թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.90մ (30.05.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 13 սմ-ով

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար



Լ.Ազիզյան